

ԹՅՆԱՄԻՆԵՐԻՆ ԱՆՈՂՈ ՔԱԲԱՐ ԿԶԱԽԶԱԽԵՆՔ

Փետրվարի 25-ին Յերեւանի Կար-
բիղի գործարանի բանվոր-ծառայող-
ները քննութեան առան ստալինյան
նոր Սահմանադրութեան ծնունդ՝ Հայ-
կական ԽՍՀ-ի Սահմանադրութեան
նախագիծը, վորոջ մեծ խանդավառու
թյուն առաջ բերեց նրանց մեջ:

— Անդրկովկասյան Տեղերացիա-
յի յեղբայրական ընտանիքում, Ան-
դրկովկասի բոլշևիկների փորձ-
ված, մարտական ղեկավար ըն-
կեր Լավրենտի Բերիայի ղեկավա-
րութեամբ, Պորհրդային Հայաս-
տանն աննախընթաց նվաճում-
ներ ձեռք բերեց: Այսուհետեւ
մենք ամենի կամրապնդենք Անդրկով-
կասի և ամբողջ Պորհրդային Միու-
թեան բազմազգ ժողովուրդների ստա-
լինյան ընտանիքն ու յեղբայրական
միասնությունը, — այսպես եր խո-
սում կարբիղագործ ստախանովական
ընկեր Աշոտ Հակոբյանը:

— Պորհրդային ժողովրդի անհուն
ցասումով մենք կվոչնչացնենք, կը-
ջախջախենք մեր հաղթարշավի առա-
ջը կանդնող թշնամուն: մեծ ՍՏԱ-
ԼԻՆԻ ղեկավարութեամբ, խորհրդա-
յին մեծ Սահմանադրութեամբ զին-
ված, մենք կատեղծենք կոմունիստա-
կան հասարակություն: